ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___» _____ 2017 թվական N_____-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի N 168 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 19-ի «Հարկման նպատակով համախառն եկամտից իրականացվող նվազեցումների որոշ տեսակների առավելագույն թույլատրելի չափեր սահմանելու մասին» N 168 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) որոշման 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժգ» ենթակետով.

«ժգ) խորհրդատվական ծառայությունների ծախսեր են համարվում հարկատուի գործունեությանը վերաբերող խորհրդատվության, կարծիքի ներկայացման, վերլուծության և նմանատիպ ծառայությունների համար այլ անձանց կողմից հարկատուին մատուցվող ծառայությունների և (կամ) հարկատուի համար կատարվող աշխատանքների (բացառությամբ վարձու աշխատող համարվող անձանց կողմից կատարվող աշխատանքների) դիմաց այդ անձանց վճարվող գումարները, ներառյալ կառավարման գծով խորհրդատվության համար այլ անձանց վճարվող գումարները:».

2) որոշման 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժե» ենթակետով.

«ժե) ոչ ռեզիդենտ կազմակերպություններից, օտարերկրյա քաղաքացիներից և քաղաքացիություն չունեցող անձանցից ստացված խորհրդատվական ծառայությունների ծախսերը՝ հաշվետու տարվա համախառն եկամտի երկու տոկոսը չգերազանցող գումարի չափով:».

3) որոշման 3-րդ կետում՝

ա. «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով,

բ. «թ[1]» և «ժբ» ենթակետերում «ԼՂՀ» բառը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից և տարածվում 2017 թվականի հաշվետու տարվա և հետագա հաշվետու տարիների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**